#48

մարտ | 2022

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ
NEW GENERATION HUMANITARIAN NGO

ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ

Ժամանակին Համաքայլ ամսագիրը պարունակում է տվյալ ամսում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացված գործունեության համապարփակ նկարագիրը:

2022 թվականի մարտի 4-ին տեղի ունեցավ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի ՄԻԱՎ-ի կանխարգելման ծրագրերի աութրիչ աշխատողների հերթական վերապատրաստման դասընթացը **«ՔՈՎԻԴ-19-ի դեմ պայքարն ու կանխարգելիչ միջոցառումները.** ՏԲ-ին և ՄԻԱՎ-ին առնչվող ծառայությունների արդյունավետ և ապահով տրամադրումը համավարակի պայմաններում» թեմայով:
Դասընթացին մասնակցում էին կազմակերպության նախագահ Սերգեյ Գաբրիելյանը, ՄԻԱՎ-ի կանխարգելման ծրագրերի համակարգող Արտյոմ Մովսեսյանը, ծրագրային այլ աշխատակիցներ:
Բացման խոսքով հանդես եկավ կազակերպության նախագահ Սերգեյ Գաբրիելյանը, որը կարևորեց համավարակի դեմ պայքարի գործընթացում աութրիչ աշխատողների կարողությունների շարունակական զարգացումը՝ որպես խոցելի խմբերին ծառայություն մատուցող և տեղեկություն փոխանցող առաջնային օղակ:
Դասընթացի փորձագետն էր ՀՀ ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի համաճարակաբանության գծով փոխտնօրեն Ռոմելլա Աբովյանը:

2022թ.-ի հունվար ամսից գործում է FrendlYerevan DROPIn կենտրոնը: DROPIn կենտրոնը ընկերական միջավայր է, որի ծառայություններից կարող են օգտվել այն մարդիկ, որոնք հարգում են բազմազանությունը ու չեն խտրականացնում մյուսներին:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ
NEW GENERATION HUMANITARIAN NGO

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԸ ԴԱՐՁՆՈՒՄ Է ԱՊԱԳԱՆ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ

FRIENDLYEREVAN DROPIn CENTER

Կազմակերպիր քո միջոցառումը

Հրավիրիր քո ընկերներին՝ ազատ ժամանակը արդյունավետ անցկացնելու համար

Օգտվիր կենտրոնի կողմից տրամադրվող ռեսուրսներից

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԻ՛Ր, ԳՐԱՆՑՎԻ՛Ր ԿԱՄ ԱՅՑԵԼԻ՛Ր FRIENDLYEREVAN DROPIn ԿԵՆՏՐՈՆ:

ՀԵՏԵՎԵՔ ՄԵԶ @friendlYerevan

Ք. ԵՐԵՎԱՆ ԱԲՈՎՅԱՆ Փ. 26, ԲՆ. 51

+374 60 40 89 89 / +374 44 47 89 80

ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀ «ՏՐԱՆՍ ԱԶԳԱՅԻՆ ԿՈԱԼԻՑԻԱ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ-ԻՆ

«Տրանս ազգային կոալիցիա» Իրավապաշտպան ՀԿ Նախագահ Կամելիա Խանդիլյան
«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ Նախագահ Սերգեյ Գաբրիելյան

Ենթադրամաշնորհը տրամադրվել է «Տրանս ազգային կոալիցիա» իրավապաշտպան ՀԿ-ին՝ «Տրանս* անձանց տեսանելիության բարձացում բազմակողմանի համագործակցության հարթակի միջոցով» ծրագրի իրականացման համար:
Ծրագրի նպատակն է բարձրացնել տրանս* անձանց տեսանելիությունը հասարակության հիմանական սոցիալական ծառայություններ մատուցող խմբերի շրջանում: Ծրագրի ընթացքում իրականացվելու է երկխոսության հարթակ տրանս* անձնաց և իրավաբանների, նորաստեղծ ՀԿ և ԶԼՄ ներկայացուցիչների միջև, որը կնպաստի վերջիններիս շրջանում տրանս* սպեցիֆիկայի վերաբերյալ գիտելիքների հզորացմանը և տրանս* տեսանելիության բարձրացմանը:
Ստեղծվելու են համագործակցության հիմքեր իրավաբանների, ՀԿ և ԶԼՄ ներկայացուցիչների հետ՝ հանուն տրանս* անձանց խնդիրների լուսաբանման և տեսանելիության բարձրացման:
Շնորհավորում ենք «Տրանս ազգային կոալիցիա» իրավապաշտպան ՀԿ -ին ՝ վստահ լինելով նշված նպատակների բարեհաջող իրականացման և արդյունավետ համագործակցության վրա՝ ի նպաստ ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանությանը, խտրականության վերացմանը և հավասարության հաստատմանը Հայաստանում:

«ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ» ՀԿ Նախագահ Արտակ Ադամ Առաքելյան
«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ Նախագահ Սերգեյ Գաբրիելյան

ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀ «ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ» ՀԿ-ԻՆ

2022թ.-ի հունվարի 11-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից տրամադրվեց երկրորդ ենթադրամաշնորհը «Իրազեկում և հզորացում հանուն հավասարության» ծրագրի շրջանակներում՝ ուղղված ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության, անխտրականության և հավասարության խթանմանը:
Ենթադրամաշնորհը տրամադրվել է «Բազմազանություն» սոցիալ-մշակութային, իրավապաշտպան ՀԿ-ին՝ «Վերաթողարկելով իրավահավասարությունը» ծրագրի իրականացման համար:
Ծրագրի նպատակն է ստեղծել կարճ ֆիլմ, որն անդրադառնում է զինկոմիսարիատներում և հոգեկան առողջության կենտրոններում ԳԲՏՔ+ անձանց նկատմամբ խտրականության ու բռնությունների դեպքերին: Հոլովակը նպաստելու է հետագա ադվոկացիոն գործողություններին, որոնք ուղղված են իրավահավասարության օրինական կարգավիճակի կայացմանը:
Ֆիլմը անդրադառնալու է նախազորակոչի ընթացքում ԳԲՏՔ+ անձանց նկատմամբ խտրականության դեպքերին, բացահայտելու այդ դեպքերը և իրականացնելու փաստահավաք գործունեություն՝ արձանագրել դրանք, նպաստելու ՍԿԳԻ հիմքով բռնությունների մասին դիսկուրսին:
Շնորհավորում ենք «Բազմազանություն» սոցիալ-մշակութային, իրավապաշտպան ՀԿ-ին՝ վստահ լինելով նշված նպատակների բարեհաջող իրականացման և արդյունավետ համագործակցության վրա՝ ի նպաստ ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանությանը, խտրականության վերացմանը և հավասարության հաստատմանը Հայաստանում:

ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀ «ՀԱՆՈՒՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ-ԻՆ

2021թ.-ի դեկտեմբերի 10-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից տրամադրվեց առաջին ենթադրամաշնորհը « Իրազեկում և հզորացում հանուն հավասարության» ծրագրի շրջանակներում՝ ուղղված ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության, անխտրականության և հավասարության խթանմանը: Ենթադրամաշնորհը տրամադրվել է «Հանուն ազատության» իրավապաշտպան ՀԿ-ին՝

«Շահերի պաշտպանություն՝ հանուն Հայաստանում ԳԲՏ դատապարտյալների իրավունքների պաշտպանության» ծրագրի իրականացման համար:

Ծրագրի նպատակն է կատարել հետազոտություն՝ պարզելու ՔԿՀ-ներում գտնվող ԳԲՏ անձանց առաջնային խնդիրները և մշակել առաջարկությունների փաթեթ՝ վերոնշյալ խնդիրները հասցեավորելու համար:

Հետազոտությունը իրականացվելու է ընտրված փորձագետի միջոցով: Կազմվելու են կարիքների գնահատման առցանց հարցաթերթիկներ, որոնք տարածվելու են շահառուների շրջանում: Լրացված հարցաթերթիկների արդյունքները ամփոփվելու են փորձագետի կողմից:

«Հանուն ազատության» Իրավապաշտպան ՀԿ փոխնախագահ Բաբկեն Ղարդյան
«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ Նախագահ Սերգեյ Գաբրիելյան

Հետազոտությունը ուղարկվելու է համապատասխան շահագրգիռ կողմերին՝ ՀՀ արդարադատության նախարարություն, ոլորտային ՔՀԿ-ներ, ՔԿՀ-ներ և այլն:

Շնորհավորում ենք «Հանուն ազատության» իրավապաշտպան ՀԿ-ին՝ վստահ լինելով նշված նպատակների բարեհաջող իրականացման և արդյունավետ համագործակցության վրա՝ ի նպաստ ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանությանը, խտրականության վերացմանը և հավասարության հաստատմանը Հայաստանում:

Ենթադրամաշնորհները տրամադրվել են «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից և ֆինանսավորվել է ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում:

ՏԵՂԵԿԱՆՔ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՓՈԽՆԱԿ ՄՈՐ ՄԻՋՈՑՈՎ ՄԱՐԴՈՒ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2022թ-ի փետրվարի 22-ին ՀՀ Առողջապահության նախարարության կողմից իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում՝ **e-draft**, հրապարակվեց օրենքի նախագիծ: Առաջարկվող նախագծով սահմանվում է փոխնակ մոր միջոցով մարդու վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունք ունեցող ապագա երեխայի կենսաբանական ծնող չհանդիսացող անձանց թույլտվություն տրամադրող միջգերատեսչական հանձնաժողովի կազմը, նրա գործունեության կարգը, այդ թվում պահանջվող և հանձնաժողովի կողմից ուսումնասիրման ենթակա փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև փոխնակ մոր միջոցով վերարտադրողական օժանդակ ծառայություններից օգտվելու վերաբերյալ դիմողի հայտը մերժելու հիմքերը:



ՏԵՂԵԿԱՆՔ

«Փոխնակ մոր միջոցով մարդու վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունք ունեցող ապագա երեխայի կենսաբանական ծնող չհանդիսացող անձանց թույլտվություն տրամադրող միջգերատեսչական հանձնաժողովի կազմը և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

Նախագծի նպատակը:

Նախագծի հանվածքով 2-ի 9-րդ կետում նշված են դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը, որոնց մեջ նշված է նաև նախագիծը:

Գործող իրավական դրությունը:

- Հոդվածների բովանդակությունը օգտագործելու և ապահովելու տեսանկյուն բովանդակությունը կանոնակարգման կողմից տրված է կանոնակարգման ընթացքում ստորագրվածք կարգավորի հոդվածների ներկայացման պահանջ այն մասին, որ անձնագրի մոր լեզու հայերենագիտ, ՀՀ կառավարության 2018թ. հուլիսի 19-ի N 811-որոշման հավելվածով սահմանված հիվանդությունների ցուցակ մասը:
- Հոդվածների ներկայացրածն այն մասին, որում է թվում այդ պահանջների ներառված է սահմանների տարբեր-տեղ ցանցը:

Պահանջվող անձամբ ուշադիր մեջբերումներ, դեպքերում հանձնաժողովը տալիս է բացասական եզրակացություն և անձի դիմումը մերժվում է:

Ըստ բարդության ստեղծվի իրավագիտելիքներ, օրենսդրական կարգավորումներ:

- ՀՀ կառավարության 2018թ. հուլիսի 19-ի N 811-որոշման հավելվածով սահմանված հիվանդությունների ցանկում ներառված են տեսանելագրավոր և տեսանելի կոդավորումով հոգեբանական նշանակման հոգեբանական և վարքային խանգարում: Նախնատեսվում է ոչ հիվանդություն է. ոչ էլ հոգեկան խանգարում: Այս մասին փաստում է ստորագրագիրքի հանձնաժողովին կանոնակարգումը (ԱԻԿ) ԿԻԿ-ն դրված 1990 թվականի մայիսի 17-ին հիվանդությունների միջազգային դասակարգման (ՄԴՀ) 10-րդ թարգմանվում հեռացրել է «տրանսգենդերային» պատասխանի հոգեկան խանգարումների շարքից
Իսկ ՄԴՀ 11-րդ թարգմանված «տրանսգենդերային» նոսկանոն հանվել է հոգեկան հիվանդությունների շարքից՝ տեղադրվածով տեսանելի ստորագրան բաժին: Ի դեպ, «տրանսգենդերային» նոսկանոն մերժվել չէ և նշանակալի չի գրեթափոխ

- Նախագծի հանվածքի 2-ի 9-րդ կետի 2-րդ և 5-րդ մասերով պահանջվող փաստաթղթերից են նաև ամուսնության վկայագիրը պատճառ (նշան սահմանված է) նեղաբարդությամբ և դրա ամուսնության մեջ գտնվող կնոջ դիմումն մոր թարգմանչը դիմելու, ընդլայնան հիվանդությամբ, տրվված հանձնաժողովին ընդլայնան կանոնակարգությունն կոդից

Վերջին հարցմանից որպես է. որ նախագծով պահանջ չի դրվում. դրանցի դիմումն մոր թարգմանչանց օգտագործ հանձնարարելու մասին:
Բացի դրանից. հաշիվ առնելով այն հանգամանքը. որ նոսկանոնությունները դրեալ 1990թ-ից չի հանձարիում հոգեկան հիվանդություն. ուստի փաստացի ամուսնությանն մեջ գտնվող նոսկանոնությունը չի դրվում դիմումն մոր թարգմանչանց դիմելու. ընդլայնան հիվանդությունը դիմելու մասին ամուսնությունը. ազգությունը չի մեջբերվածք է:

Առաջարկություն:

- հանվածքի 2-ի 9-րդ կետի 8-րդ մասից բացառություն նախատեսել տրամանդատագրերի.
- հանվածքի 2-ի 9-րդ կետի 9-րդ մասից հանել «սահմանների տարբեր-տեղ» բառերը, պահանջը

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն նախագծի վերաբերյալ իր առաջարկություններն է ներկայացրել ՀՀ առողջապահության նախարարությանը, որոնց մի մասը ընդունվել են:

ՄԻԱՎ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ-ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՎ ԱՈՒԹՐԻՉ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

2022 թվականի փետրվարի 16-ին տեղի ունեցավ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի ՄԻԱՎ-ի կանխարգելման ծրագրերի աշխատակազմի հանդիպում-քննարկումը:

Հանդիպմանը մասնակցում էին կազմակերպության նախագահ Սերգեյ Գաբրիելյանը, ՄԻԱՎ-ի կանխարգելման ծրագրերի համակարգող Արտյոմ Մովսեսյանը, ծրագրային այլ աշխատակիցներ:

Հանդիպմանը ներկա էին նաև Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնի մոնիթորինգի և գնահատման բաժնի մասնագետները:

Ծրագրերի ադմինիստրատիվ աշխատակազմի ներկայացուցիչները աութրիչ աշխատողների հետ քննարկեցին ծրագրերի ընթացքը և արդյունքները, նվաճումները, թերությունները, խոչընդոտները:

Ծրագրային հանդիպում-քննարկմանը հաջորդեց աութրիչ աշխատողների վերապատրաստման դասընթացը «Աութրիչ աշխատանք և խորհրդատվություն թեմայով», որը վարեց կազմակերպության նախագահ, դասընթացավար Սերգեյ Գաբրիելյանը:

Թեմայի շրջանակներում քննարվեցին աութրիչ աշխատանքի էությունը, նպատակները, խնդիրները, տրամադրվող տեղեկության շրջանակը: Դասընթացավարը մասնավորապես անդրադարձավ ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելման ոլորտում աութրիչ աշխատանքի առանձնահատկություններին, աշխատանքի կազմակերպման ձևերին, աութրիչ աշխատողի աշխատանքի գնահատման սկզբունքներին և ձևաչափերին, աութրիչ աշխատանքի էթիկային:

Թե՛ աշխատանքային հանդիպումը, թե՛ դասընթացը անցան ակտիվ հարց ու պատասխանի և քննարկումների մթնոլորտում, բոլոր մասնակիցները գնահատեցին այս ձևաչափով հանդիպումների, ինչպես նաև պարբերական վերապատրաստումների կարևորությունը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ-ՔՆՆԱՐԿՈՒՄ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆ Ն. Գ. ՆԻԿՈ ՍԽԵՐՄԵՐՍԻ ԿԵՑԱՎԱՅՐՈՒՄ

2022 թվականի փետրվարի 18-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի ներկայացուցիչները և շահառուները հանդիպում ունեցան Հայաստանում Նիդերլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Նիկո Սխերմերսի կեցավայրում:

Հանդիպման ընթացքում մասնակիցները քննարկեցին այն մարտահրավերները և խնդիրները, որոնց բախվում են խոցելի խմբերը Հայաստանում, կիսվեցին անհատական փորձառություններով՝ ևս մեկ անգամ շեշտելով իրավապաշտպան ակտիվ գործունեության և համագործակցության կարևորությունը նշված խնդիրների լուծման հարցում:

Կազմակերպությունը շնորհակալություն է հայտնում Ն.Գ. Նիկո Սխերմերսին և Հայաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանությանը՝ հանդիպում-քննարկումը նախաձեռնելու և Հայաստանում խոցելի խմբերի հիմնախնդիրները մշտապես ուշադրության արժանացնելու և դրանց լուծմանն աջակցելու համար:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՀԱՆԴԻՊՈՒՄ-ՔՆՆԱՐԿՈՒՄ

2022 թվականի մարտի 24-ին տեղի ունեցավ «Գենդերային ինքնության ճանաչումը Հայաստանում» խորագրով հանդիպում-քննարկումը, որը կազմակերպվել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացվող «Խթանելով տրանս* անձանց առողջության իրավունքը Հայաստանում» ծրագրի շրջանակներում Հայաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան աջակցությամբ:

Հանդիպում-քննարկմանը մասնակցում էին դիվանագիտական, պետական և հասարակական ոլորտի, տրանս* անձանց հետ աշխատող ՀԿ-ների և տրանս* համայնքի ներկայացուցիչներ:

Հանդիպման սկզբում բացման խոսքով հանդես եկավ կազմակերպության նախագահ Սերգեյ Գաբրիելյանը, որը ողջունեց ներկաներին, շնորհակալություն հայտնեց հրավերը ընդունելու և ներկա գտնվելու համար՝ մաղթելով արդյունավետ քննարկում:

Բացման խոսքով հանդես եկավ նաև Հայաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան քաղաքական և տնտեսական հարցերով պատասխանատու Լարիսա Հարությունյանը, որը չափազանց կարևորեց բազմակողմանի արդյունավետ համագործակցությունը, որպես արդյունք ստացված հրաշալի օրենքի նախագիծը, որը պետք է ադվոկացիայի շնորհիվ հասցնել որոշում կայացնողներին:

Այնուհետև զեկույցով հանդես եկավ ծրագրի տեղական փորձագետ իրավաբան Ծուշան Խնկոյանը, որը ներկայացրեց «Գենդերի իրավական նշումի փոփոխման մասին» օրենքի նախագիծը իր հիմնավորումներով: Օրենքի նախագծով կարգավորվում են գենդերի մասին նշումի փոփոխման, ինչպես նաև այդ գործընթացում պետական գրանցումների համար պատասխանատու մարմնի ստեղծման կարգը:

Նախագիծը մշակվել է Հայաստանում ոլորտային ՀԿ և տրանս* համայնքի ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խմբի անդամների հետ քննարկումների, ինչպես նաև միջազգային փորձի ու միջազգային փորձագետի կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա:

Հանդիպումը անցավ ակտիվ քննարկման մթնոլորտում, մասնակիցները նշեցին օրենքի նախագծի հրատապության և այն կյանքի կոչելու կարևորության մասին, պայմանավորվեցին համատեղ քայլեր ձեռնարկել այն շահագրգիռ կողմերին ներկայացնելու և ընդունելու ուղղությամբ:

ՇՎԵԴԻԱՅԻ ԴԵՍՊԱՆ Ն.Գ. ՊԱՏՐԻԿ ՍՎԵՆՍՈՆԻ ԱՅՑԸ «ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ

2022թ.-ի մարտի 17-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ էին այցելել Հայաստանում Շվեդիայի Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. Պատրիկ Սվենսոնը և դեսպանության ներկայացուցիչ Դավիթ Դիլանյանը:

Հանդիպման նպատակն էր քննարկել Հայաստանի խոցելի խմբերի հիմնախնդիրները, առկա բացերը և դրանց լուծմանն ուղղված համագործակցության ուղիները:
«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ ներկայացուցիչները ներկայացրին կազմակերպության իրականացրած աշխատանքները Հայաստանում խոցելի խմբերի իրավունքների պաշտպանության և բարեկեցության ապահովման ուղղությամբ, քննարկեցին գրանցված հաջողությունները, և դեռ գոյություն ունեցող խնդիրներն ու դժվարությունները:
Ն.Գ. Պատրիկ Սվենսոնը հայտնեց, որ Շվեդիայի դեպանությունը բարձր է գնահատում կազմակերպության կատարած կարևոր աշխատանքը և, Շվեդիան, լինելով մարդու իրավունքների, հավասարության և առողջապահության առաջամարտիկներից, մեծապես կարևորում է խոցելի խմբերի իրավունքների լիարժեք պաշտպանության և իրականացման ապահովումը երկրում:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն խորին շնորհակալություն է հայտնում մեծարգո դեսպանին և Շվեդիայի դեսպանությանը մշտապես ՆՍՀԿ -ի և կազմակերպության շահառուների կողքին լինելու և խոցելի խմբերի հիմնախնդիրները շարունակաբար ուշադրության կենտրոնում պահելու համար:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁԸ

2022 թվականի հուվարին 27 «Նոր Սերունդ» Մարդասիական ՀԿ են դիմել օտարերկրացիներ Տ.Մ.-ն (անունը փոխված է), Դ.Հ.-ն (անունը փոխված է) և Ա.Ծ.-ն (անունը փոխված է), որոնց մոտ նաբերվել է ՄԻԱՎ դրական: Անձինք ուղղորդվել են ՀՀ ԱՆ «Ինֆեկցիոն հետազոտությունների ազգային կենտրոն» ՓԲԸ՝ հետագա հետազոտությունների, ՄԻԱՎ-ի հայտնաբերման դեպքում դիսպանսերայի հսկողության անցնելու և բուժում ստանալու նպատակով, սակայն շահառուներին դեղորայք չի տրամադրվել՝ ՀՀ կացության քարտ չունենալու հանգամանքով պայմանավորած:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն գրությամբ դիմել է ՀՀ առողջապահության նախարարություն և «Ինֆեկցիոն հետազոտությունների ազգային կենտրոն» ՓԲԸ՝ խնդրելով պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրել բժշկական օգնություն և սպասարկում:
Համագործակցության արդյունքում անձինք ընդգրկվել են բուժման և խնամքի ծառայություններում:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն շնորհակալություն է հայտնում ՀՀ Առողջապահության նախարարությանը և «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ին արդյունավետ համագործակցության համար:

Պարզաբանում.

- *«Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենքի հոդված 3.*

Օրենքը տարածվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետև՝ անձինք), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) վրա:

- *ՀՀ առողջապահության նախարարի 22.11.2013 թվականի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության եւ սպասարկման շրջանակներում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման եւ բուժման կազմակերպման չափորոշիչը հաստատելու մասին» № 75-Ն որոշման 13-րդ կետ.*

ՀՌՎ բուժումն անվճար է և տրամադրվում է ցուցում ունեցող բոլոր հիվանդներին, որոնք տվել են իրենց համաձայնությունը բուժման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն ստանալուց հետո:

ԼԱՅՖ-19
ԱՐՏԱԳՆԱ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ

2022 թվականի փետրվարի 24-25-ը տեղի ունեցավ «Իրազեկում և հզորացում հանուն հավասարության» ծրագրի շրջանակներում իրականացվող ԼԱՅՖ-19 արտագնա տեղեկատվական հարթակը, որը այս անգամ նախատեսված էր ԼԳԲՏԻ սկսնակ ակտիվիստների համար:

ԼԱՅՖ-19 արտագնա տեղեկատվական հարթակի նպատակն է ԼԳԲՏԻ համայնքի ներկայացուցիչների շրջանում բարձրացնել առաջնորդության, ակտիվիզմի և մարդու իրավունքների, խարանի և խտրականության վերաբերյալ գիտելիքների մակարդակը, նպաստել իրավագիտակցության բարձրացմանը, ծանոթացնել իրավունքների պաշտպանության ներպետական և միջազգային մեխանիզմներին:

Բացման խոսքով հանդես եկավ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը, ով ներկայացրեց կազմակերպության պատմությունը, գործունեության ոլորտները և առաջնահերթությունները, ինչպես նաև շնորհակալություն հայտնեց մասնակիցներին հետաքրքրվածության և մասնակցության համար:

Տեղեկատվական հարթակի սկզբում մասնակիցները ներկայացան՝ նշելով, թե ինչու են ցանկանում մասնակցել և ինչ են ակնկալում:
Առաջին օրը նվիրված էր «Առաջնորդություն և ակտիվիզմ» թեմային: Դասընթացավար Սերգեյ Գաբրիելյանը մասնակիցներին ներկայացրեց առաջնորդություն հասկացությունը, առաջնորդության բնութագիրը, առաջնորդի հատկանիշները, ինչպես նաև տեսակները: Ներկայացվեցին ԼԳԲՏ ակտիվիզմի պատմությունը, տարբեր շարժումների նախադեպերը և ակտիվիստների կարևորությունը ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում: Խոսվեց նաև Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ ուղղված միջոցառումները համակարգող հանձնաժողովի աշխատանքների և որոշումների կայացման գործընթացում համայնքների ներգրավվածության կարևորության մասին:
Երկրորդ օրը մասնակիցները ծանոթացան «Մարդու իրավունքների պաշտպանության ներպետական և միջազգային մեխանիզմները» և «Խարանի և խտրականության կանխարգելում» թեմաներին, որոնք ներկայացրեց իրավաբան, դասընթացավար Լուսինե Գասպայանը՝ խոսելով մարդու իրավունքներ հասկացությունից, ներկայացնելով մարդու իրավունքները տարբեր ժամանակահատվածներում, մարդու իրավունքների սերունդները, պաշտպանության ներպետական և միջազգային համակարգերը, մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, ՄԻԵԴ դիմելու ընթացակարգը: Դասընթացավարը մասնակիցներին ծանոթացրեց նաև խտրականության սահմանմանը, խտրականության տեսակներին ու հիմքերին, խտրական տերմիններին և դրանց անխտրական տարբերակներին:
Հարթակի ավարտին մասնակիցներին շնորհվեցին վկայականներ:

ՖՈԿՈՒՍ ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

2022 թ.-ի փետրվարի 22-ին տեղի ունեցավ Գենդերային ինքնության իրավական ճանաչման օրենքի նախագծի և հարակից փաստաթղթերի դիտարկման աշխատանքային խմբի, շահառուների մասնակցությամբ հերթական հանդիպումը ֆոկուս խմբային քննարկման ձևաչափով: Քննարկմանը բացման խոսքով հանդես եկավ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը: Վերջինս կարևորեց հանդիպում-քննարկման մասնակիցների ներդրումը նախագծերը արդյունավետ տեսքի բերելու գործում: Տեղական փորձագետ Շուշան Խնկոյանի կողմից ներկայացվեց նախագծերի նպատակը: Մասնակիցները ծանոթացան օրենքի նախագծով առաջարկվող գենդերի իրավական ճանաչման պահանջներին, ինչպես նաև միջազգային փորձին՝ Նիդեռլանդներ, Դանիա, Իսպանիա, Շոտլանդիա: Մեկնաբանվեցին նախագծով սահմանվող մի շարք դրույթներ: Մասնակիցների կողմից հնչեցին տարբեր կարծիքներ այդ դրույթների շուրջ:
Ներկայացվեց նշումի փոփոխության համար նախատեսվող լիազոր մարմնի կազմավորման, գործունեության և իրավասությունների հարցը: Մեկնաբանվեց այլ երկրներում գործող պրակտիկան:
Ֆոկուս խմբային քննարկման արդյունքները կօգնեն ազգային և միջազգային փորձագետներին բարելավելու նախագիծը և համախատասխանեցնելու այն Հայաստանում տրանս* համայնքի կարիքներին:

ԱՈՒԹՐԻՉ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ԶԱՐԳԱՑՆԵԼ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԻԱՎ-ը՝ Մարդու իմունային անբավարարության վիրուսը, ժամանակին ախտորոշելու դեպքում լիովին վերահսկելի է, այնինչ մինչ օրս շատերը ՄԻԱՎ-ը նույնացնում են ՁԻԱՀ-ի՝ ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի հետ և ախտորոշումը համարում մահվան դատավճիռ: Իրականում ՁԻԱՀ-ը ՄԻԱՎ-ի վերջնային փուլն է: ՄԻԱՎ-ի վերաբերյալ պարբերաբար հետազոտվելը կօգնի ժամանակին հայտնաբերել և վերահսկել այն:

2022թ.-ի մարտի 15-16-ը ՀՀ ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնում» (ԻՀԱԿ) տեղի ունեցավ հերթական վերապատրաստման դասընթացը «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի (ՆՍՀԿ) կողմից իրականացվող ՄԻԱՎ-ի կանխարգելման ծրագրերի խորհրդատուների համար: Դասընթացը կարևոր է նրանով, որ անմիջականորեն թիրախ խմբերի հետ աշխատող անձինք, այս դեպքում՝ աութրիչ աշխատակիցները, ամրապնդում են ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի վերաբերյալ իրենց գիտելիքների պաշարներն ու ձեռք են բերում համապատասխան մասնագիտական հմտություններ իրենց իսկ շահառուների շրջանում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցկացնելու համար: Սա իր հերթին հնարավորություն է ստեղծում այս հետազոտությունը դարձնել առավել հասանելի այն խմբերի համար, որոնց հետ աշխատում է կազմակերպությունը:

Առաջին օրը մասնակիցների համար լավ հնարավորություն էր կիսելու իրենց անձնական փորձը մյուսների հետ: Դերային խաղերի միջոցով աութրիչ աշխատողները ամրապնդեցին իրենց գիտելիքները, սովորեցին ինչպես վարվել տարբեր իրավիճակներում: Թիմային աշխատանքների միջոցով նրանք նաև առանձնացրին փուլերը, որոնք ներառում է աութրիչ աշխատանքը գործնականում: Օրվա միջոցառումները ֆասիլիտացնում էր ՀՀ ԱՆ Գլոբալ հիմնադրամի ծրագրերի համակարգման խմբի մոնիթորինգի և գնահատման մասնագետ Նաիրա Սերգեևան:

Երկրորդ օրը նվիրված էր ավելի տեսական գիտելիքների ամրապնդմանը:Դասընթացը շարունակեց ԻՀԱԿ աշխատակից Մարինե Ասրյանը, որը խոսեց աութրիչ աշխատանքից, ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվության հիմնական սկզբունքներից ու հմտություններից, ինչպես նաև թեստերի տարբեր պատասխանների դեպքում խորհրդատվության առանձնահատկություններից:

Այնուհետև ԻՀԱԿ աշխատակից Զորի Միքայելյանը խոսեց սոցիալ-հոգեբանական խորհրդատվության հմտություններից և տեխնիկայից:

ԻՀԱԿ բժշկուհի Թամարա Հովսեփյանի հետ մասնակիցները բացահայտեցին ինքնաթեստավորման առանձնահատկությունները, սովորեցին թեստավորման տեխնիկան, հետազոտության արդյունքների ճիշտ մեկնաբանումը:

ՏԲ-ի վերաբերյալ խորհրդատվության առանձնահատկությունների մասին խոսեց ԻՀԱԿ բժշկուհի Աստղիկ Դավիդյանը, իսկ ՄՓԲ-ի վերաբերյալ՝ ՀՀ ԱՆ Կախվածությունների բուժման ազգային կենտրոնի բժշկուհի Լիլիթ Մարգարյանը:

Դասընթացի ավարտին մասնակիցներին տրվեց հավաստագրեր:

ՀԱՋՈՂՈՒԹՅԱՄԲ ԿԱՅԱՑԱՎ ICAN ՊԼԱՏՖՈՐՄԸ

2022թ.-ի մարտի 29-ից ապրիլի 1- ը տեղի ունեցավ ԼԳԲՏԻ անձանց համար նախատեսված 4-օրյա I CAN (համայնք, ակտիվիզմ, համագործակցություն) կրթական պլատֆորմը, որը կազմակերպվել էր «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից:
Դասընթացի նպատակներն էին ԼԳԲՏԻ անձանց շրջանում կարողությունների զարգացումը՝ տրամադրելով գիտելիքներ այնպիսի թեմաներից, ինչպիսիք են՝ դրամաշնորհային ծրագրերի մշակումն ու կառավարումը, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելումն ու թեստավորման կարևորությունը, սեռականությունը, թրաֆիքինգը, վերջիններիս իրավագիտակցության բարձրացումը՝ գիտելիքներ տրամադրելով առողջության իրավունքի, խարանից և խտրականությունից զերծ լինելու իրավունքի ոլորտներից:

Հաշվի առնելով, որ դասընթացին մասնակցում էին համայնքի այնպիսի ներկայացուցիչներ, որոնք տարբեր ժամանակներում առանձնացել են իրենց ակտիվ հասարակական գործունեությամբ ու ակտիվիզմով, առանձնակի ուշադրություն հատկացվեց համայնքի կարիքների գնահատմանն ու խնդիրների բացահայտմանը ակտիվ քննարկումների ու աշխատարանների միջոցով:

Դասընթացի առաջին օրը մասնակիցները սկսեցին ծանոթացմամբ, ապա հավաքագրվեցին վերջիններիս ակնկալիքներն ու մտավախությունները՝ կապված կրթական պլատֆորմի հետ, որից հետո կազմվեցին կանոններ դասընթացի բոլոր օրերի համար:

Օրակարգի ներկայացումից և մի շարք թիմային վարժություններից հետո դասընթացավար Սերգեյ Գաբրիելյանը ներկայացրեց առաջնորդության առանձնահատկությունները, ապա Հմայակ Ավետիսյանը ներկայացրեց «Ինքնայրում և հաղթահարում» թեման:
Պլատֆորմի երկրորդ օրը Սերգեյ Գաբրիելյանը սկսեց «Ծրագրերի մշակում և կառավարում» թեմայով, որից հետո կազմակերպեց գործնական աշխատանք ու հնարավորություն ստեղծվեց մասնակիցների համար ներկայացնել սեփական գաղափարները ծրագրային ֆորմատով:

Օրվա երկրորդ կեսին մասնակիցները հնարավորություն ունեցան այցելելու Ծաղկաձորի վանական համալիր և ճոպանուղի: Օրը ամփոփվեց թեմատիկ ֆիլմի դիտումով:
Կրթական պլատֆորմի երրորդ օրը իրավական հարցերով փորձագետ Լուսինե Գասպարյանը ներկայացրեց «Մարդու իրավունքներ» թեման, որտեղ առանձնակի մանրամասնորեն քննարկվեցին «Խարան, խտրականություն և խոշտանգում» թեմաները, անդրադարձ կատարվեց խարանի և խտրականության սահմանումներին, խտրականության դրսևորումներին ու տեսակներին, խտրականությունն արգելող ներպետական և միջազգային օրենսդրական կարգավորումներին: Դասընթացների մասը շարունակեց Սերգեյ Գաբրիելյանը «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելում» թեմայով, որի ընթացքում քննարկվեցին ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի առանձնահատկությունները, փոխանցման ուղիները, կանխարգելման մեթոդներն ու թեստավորման կարևորությունը:

Օրվա երկրորդ կեսին Հմայակ Ավետիսյանը ներկայացրեց «Սեռականություն» թեման, իսկ օրվա ավարտին ԱՄՆ դեսպանատան ներկայացուցիչ Լիլիթ Անտոնյանը ներկայացրեց «Թրաֆիքինգ» թեման:

Պլատֆորմի վերջին օրը ամփոփվեցին դասընթացները, ապա կազմակերպվեց ԼԳԲՏԻ համայնքի կարիքների գնահատում առանձին խմբերում և Հայաստանում ԼԳԲՏԻ հիմնախնդիրների քննարկում: Հավաքագրված ողջ ինֆորմացիան ամփոփվեց և ամբողջացվեց պլենար նիստի ընթացքում:
Կրթական պլատֆորմը անցավ ակտիվ քննարկումների, հարցուպատասխանի մթնոլորտում՝ ներառելով տեսական և գործնական վարժանքներ, աշխատարաններ, թիմային վարժություններ:

Բոլոր մասնակիցներին շնորհվեցին վկայականներ:

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑ ՏՐԱՆՍ* ԵՎ ՈՉ ԲԻՆԱՐ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

2022 թվականի մարտի 29-ից ապրիլի 1-ը Ծաղկաձորում տեղի ունեցավ տրանս* և ոչ բինար անձանց քառօրյա առաջնորդության դպրոցը, որը կազմակերպվել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացվող «Տրանս* քարտեզը ԱԵԿԱ-ում» ծրագրի շրջանակներում Առողջության, իրավունքի, գենդերային և սեռական բազմազանության եվրասիական կոալիցիայի ֆինանսական աջակցությամբ: Առաջնորդության դպրոցի նպատակն է խթանել տրանս* անձանց ներգրավվածությունը ՄԻԱՎ-ին առնչվող որոշումների կայացման գործընթացում: Դպրոցը նախատեսված էր Հայաստանում տրանս* և ոչ բինար ակտիվիստների կարողությունների զարգացմանը և հզորացմանը, ինչպես նաև հնարավորություններ ստեղծելուն, որ վերապատրաստված անձինք կարողանան հետագայում տարածել իրենց ստացած գիտելիքները այլ տրանս* և ոչ բինար անձանց շրջանում, հրավիրվել վարելու հետագա առաջնորդության դպրոցները որպես հավասարը հավասարին խորհրդատուներ ու դասընթացավարներ: Դպրոցի կազմակերպման և իրականացման ընթացքին ակտիվ մասնակցություն են ունեցել նաև Տրանս* անձանց հայաստանյան աշխատանքային խմբի անդամ կազմակերպությունները, որոնք պլանավորում են նույն ձևաչափի դասընթացներ անցկացնել նաև իրենց շահառու խմբերի շրջանում՝ ստեղծելով տրանս* շարժում:

Առաջնորդության դպրոցի բացման խոսքով հանդես եկավ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը, իսկ աշխատանքները և վերապատրաստման գործընթացը ֆասիլիտացնում էր «Տրանս* քարտեզը ԱԵԿԱ-ում» ծրագրի ազգային համակարգող, դասընթացների մոդուլը մշակող փորձագիտական խմբի անդամ Հմայակ Ավետիսյանը:

Մինչև բուն դասընթացների շարքին անցնելը մասնակիցները ծանոթացան, պատմեցին իրենց ակտիվիզի մասին, վեր հանվեցին նրանց ակնկալիքները և մտահոգությունները, մշակվեցին կանոններ, կազմակերպվեց թիմի կառուցման վարժություն, որպեսզի հետագա աշխատանքները ավելի անկաշկանդ ընթանան:

Դպրոցը անցկացվեց ակտիվ քննարկումների, փորձի փոխանակումների, հարցուպատասխանի ձևաչափով, որի ընթացքում մասնակիցները իրենք էին նախապատրաստում և ներկայացնում թեմաները՝ նախօրոք տրամադրված նյութերի և դասընթացավարական մոդուլի հիման վրա:

4-օրյա ակտիվ և ինտենսիվ աշխատանքների շնորհիվ մասնակիցները զարգացրեցին իրենց առաջնորդական հատկանիշները, ծանոթացան ՄԻԱՎ-ին առնչվող ազգային մեխանիզմներին և գործիքներին, որոշումների կայացման գործընթացին և կառույցներին, սովորեցին ադվոկացիոն մեթոդներ՝ ուղղված պետական մարմինների հետ աշխատանքին, համայնքի մոբիլիզացիային և գենդերային ինքնության հիմքով խարանի և խտրականության կանխարգելմանը, քննարկեցին պաթոլոգիզացիայի, ներքինացված տրանսֆոբիայի, տրանս* ակտիվիզմի և առողջության վերաբերյալ հարցեր, ինչպես նաև ձևավորեցին դասընթացավարական թիմ, որը պատրաստակամություն հայտնեց հետագայում կազմակերպելու և ներգրավվելու տրանս* համայնքի շրջանում առաջնորդության խթանման գործընթացներում:

Մասնակցության ավարտին շնորհվեցին վկայականներ:

Տրանս* համայնքի համար նախատեսված առաջնորդության դպրոցները և դասընթացները լինելու են շարունակական, իսկ որպես դասընթացավարներ, ֆասիլիտատորներ և կազմակերպիչներ ներգրավվելու են վերապատրաստված տրանս* և ոչ բինար անձինք:

ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻՆ ԵՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ

2022 թ.-ի մարտի 10-ին տեղի ունեցավ Գենդերի իրավական նշումի փոփոխման մասին օրենքի նախագծի և հարակից փաստաթղթերի դիտարկման աշխատանքային խմբի հերթական հանդիպումը, որին ներկա էին նաև տրանս* համայնքի ներկայացուցիչներ:

Տեղական փորձագետ Շուշան Խնկոյանը աշխատանքային խմբի անդամներին և համայնքի ներկայացուցիչներին ներկայացրեց վերջնական տեսքի բերված օրենքի նախագիծը, որը բարելավվել, լրամշակվել և ձևավորվել է միջազգային փորձի և աշխատանքային խմբի շրջանում անցկացված ֆոկուս խմբային քննարկման հիման վրա: Մասնակիցները բարձրացրին իրենց հուզող հարցերը և ստացան պատասխաններ: **Վերջնականացված օրենքի նախագիծը ներկայացվելու է բոլորի շահագրգիռ կողմերի դիտարկմանը:**

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆԻ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՅԱՑՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԲՈՂՈՔԱՐԿՎԵԼ Է ՎԵՐԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ



«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն (ՆՍՀԿ) 2022թ-ի մարտի 9-ին դիմել էր ՀՀ ոստիկանություն խնդրելով 2022թ-ի մարտի 6-ին ֆեյսբուք սոցիալական ցանցի ուղիղ եթերում հնչեցված արտահայտությունների գործով տալ համապատասխան իրավական ընթացքը:

2022թ-ի մարտի 29-ին ՆՍՀԿ-ն ստացել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնի ավագ հետաքննիչ Հ. Գասպարյանի որոշումը: Հետաքննիչի կողմից որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժվել է հանցակազմի բացակայության հիմքով:

ՆՍՀԿ-ն վերոնշյալ որոշումը բողոքարկել է վերադասության կարգով՝ ՀՀ դատախազություն:

Ընթացքի մասին Կազմակերպությունը լրացուցիչ կլուսաբանի:

Գործի նախապատմությունը:

2022թ-ի մարտի 6-ին ժամը 18:20-ի սահմաններում ֆեյսբուք սոցիալական ցանցում «Helen Helen Hakobovna» անունով օգտատերը իր էջում ուղիղ հեռարձակում է ունեցել, որի ընթացքում բացի բազում վիրավորանքներից նաև բռնության հրապարակային կոչեր է հնչեցրել, մասնավորապես՝ ապառնացել է այրել նույնասեռական անձանց: Օգտատերը բացահայտ կերպով հայտարարել է ֆիզիկական գործողություններ կատարելու իր մտադրության մասին, ինչպես նաև բռնություն գործադրելու վերաբերյալ կոչեր է հնչեցրել:

«Նոր Սերունդ» Մարդասիրական հասարակական կազմակերպությունը դեպքի առթիվ հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ՀՀ ոստիկանություն:

ՀՀ Ոստիկանության Երևան քաղաքի վարչությունից պատասխան գրությամբ հայտնել են, որ ՆՍՀԿ-ի գրությունն ուղարկվել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժին՝ հետաքննությամբ ընթացքը լուծելու համար:

Պարզաբանում.

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 226.2 հոդված՝

Անձի կամ անձանց խմբի նկատմամբ սեռով, ռասայով, մաշկի գույնով, էթնիկական կամ սոցիալական ծագումով, գենետիկական հատկանիշներով, լեզվով, կրոնով, աշխարհայացքով, քաղաքական կամ այլ հայացքներով, ազգային փոքրամասնությանը պատկանելությամբ, գույքային վիճակով, ծնունդով, հաշմանդամությամբ, տարիքով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասով, 226-րդ, 226.1-ին, 301-րդ, 385-րդ, 397.1-ին հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշները՝

պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինսապատիկից հարյուրհինսապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ-Ն ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է

- ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ
- ԴԱՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ
- ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ՄԵԶ ՀԵՏ ԿԱՐՈՂ ԵՔ ԿԱՊ ՀԱՍՏԱՏԵԼ

+374 378989

+374 478989

(ՆԵՐՔԻՆ 106, 107)

ԿԱՄ ԱՅՑԵԼԵԼ ՆՍՀԿ ԳՐԱՍԵՆՅԱԿ, ԹՈՒՄԱՆՅԱՆ 10, ԲՆ.7

www.ngngo.net

«ԻՐԱԶԵԿ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ»

2022թ.ի մարտի 29-30-ը տեղի ունեցավ SUS անձանց համար նախատեսված դասընթաց,որը կազմակերպվել էր է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից:

Դասընթացի նպատակ էր SUS անձանց շրջանում բարձրացնել իրազեկությունը ՄԻԱՎ-ի կանխարգելման և թեստավորման կարևորության, ՄԻԱՎ-ի կանխարգելման մեթոդների, փոխանցման ուղիների վերաբերյալ, ինչպես նաև մեծացնել վերջիններիս իրավագիտակցությունը՝ գիտելիքներ տրամադրելով առողջության իրավունքի, խարանից և խտրականությունից զերծ լինելու իրավունքի ոլորտներից: :

Դասընթացի փորձագետներն էին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի նախագահ Սերգեյ Գաբրիելյանը և նույն կազմակերպության իրավաբան, իրավական հարցերով փորձագետ Լուսինե Գասպարյանը:

Դասընթացի առաջին օրը մասնակիցները սկսեցին ծանոթացմամբ, ապա դասընթացավար Սերգեյ Գաբրիելյանը ներկայացրեց «ՄԻԱՎ-ի կանխարգելման և թեստավորման կարևորությունը» թեման, որի շրջանակներում մանրամասնորեն քննարկվեցին թե ինչ է ՄԻԱՎ-ը և ՁԻԱՀ-ը, փոխանցման ուղիները, կանխարգելման մեթոդները:

Դասընթացի երկրորդ օրը իրավաբան Լուսինե Գասպարյանը անդրադարձ կատարեց «Առողջության իրավունք» թեմային՝ ներկայացնելով ներպետական և միջազգային պաշտպանության մեխանիզմները, ՀՀ քաղաքացու առողջությանն առնչվող իրավունքները, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքը, «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» օրենքը, ՄԻԱՎ-ով ապրող անձանց իրավունքները և պարտականությունները: Այնուհետև փորձագետը ներկայացրեց «Խարան և խտրականություն» թեման՝ անդրադարձ կատարելով խարանի և խտրականության սահմանումներին, խտրականության դրսևորումներին ու տեսակներին, խտրականությունն արգելող ներպետական և միջազգային օրենսդրական կարգավորումներին:

2021թ-ի սեպտեմբերի 10-ից «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացվող «ՄԻԱՎ վարակի կանխարգելումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում մեկնարկեց «Իրազեկ և պաշտպանված» խորագրով դասընթացների շարքը: Դասընթացների նպատակն է զարգացնել ՄԻԱՎ-ի նկատմամբ խոցելի խմբերի կարողությունները սեռականության, առաջնորդության, ՄԻԱՎ-ի կանխարգելման, առողջության իրավունքի ոլորտներում, նպաստել շահառուների շրջանում ՄԻԱՎ-ի վերաբերյալ անվտանգ սեռական վարքագծի ձևավորմանը և որոշումների կայացման գործընթացում նրանց ներգրավվածությանը:

2022 թ.-ի ապրիլի 15-ին անցկացվեց հերթական դասընթացը, որը այս անգամ նախատեսված էր 30 SUS շահառուների համար:

Դասընթացի առաջին հատվածում փորձագետ Լևոն Չիլինգարյանը ներկայացրեց «ՄԻԱՎ-ի կանխարգելումն ու թեստավորման կարևորությունը» թեման:

Դասընթացավար-փորձագետը խոսեց ՄԻԱՎ վարակի, փոխանցման ուղիների, ՄԻԱՎ-ի թեստավորման եղանակների

և կարևորության մասին: Քննարկումների արդյունքում մասնակիցները հասկացան ՄԻԱՎ-ի նկատմամբ անվտանգ սեռական վարքագիծ ձևավորելու, ինչպես նաև պարբերաբար թեստավորվելու կարևորությունը:

Դասընթացը շարունակեց կազմակերպության իրավաբան Շուշան Խնկոյանը, որը ներկայացրեց «Առողջության իրավունք» թեման: Նա խոսեց բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս մարդու իրավունքներից, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման տեսակներից, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների իրավունքներից և պարտականություններից, ինչպես նաև ՄԻԱՎ վարակից առաջացած հիվանդության կանխարգելման մասին ՀՀ օրենքից:

Դասընթացն անցավ ջերմ մթնոլորտում, որտեղ մասնակիցները հնարավորություն ունեցան հղելու հարցեր, կատարելու մեկնաբանություններ և ստանալ սպառիչ պատասխաններ:

ԿԱՅԱՑԱՎ ՍԵՔՍ ԱՇԽԱՏՈՂ ԵՎ ՏՐԱՆՍ* ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԻՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

2022 թվականի ապրիլի 14-ին Երևանում տեղի ունեցավ սեքս աշխատող և տրանս* անձանց առաջին ազգային համաժողովը, որը միավորեց բազմաթիվ մասնակիցների ողջ Հայաստանից:

Այս տարի համաժողովը նվիրված էր առողջապահական ոլորտում Հայաստանի սեքս աշխատող և տրանս* անձանց կարիքների վերհանմանը, խնդիրների բացահայտմանը և դրանք լուծելու ուղղություններ փնտրելուն համայնքների ներկայացուցիչների աչքերով:

Համաժողովի առաջին հատվածը նվիրված էր Հայաստանում ՄԻԱՎ-ի կանխարգելման ծառայությունների, ծրագրերի առաջընթացի, բացերի քննարկմանը և դրանց հասցեավորմանը: Քննարկմանը հրավիրված էին մասնակցելու ՀՀ առողջապահության նախարարության ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի ծրագրերը համակարգող խմբի ղեկավար Հասմիկ Հարությունյանը և գնահատման ու մոնիթորինգի մասնագետ Նաիրա Սերգեևան: Քննարկումը ֆասիլիտացնում էին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը և «Տրանս ազգային կոալիցիա»

ՄԻԱՎ-Ի ԱՐԱԳ ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԹՔԻ ՄԻՋՈՑՈՎ

- ԳԱՂՏՆԻ, ԱՆԱՆՈՒՆ ԵՎ ԱՆՎՃԱՐ
- ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ 20 ՐՈՊԵԻՑ
- ՁԵՋ ՀԱՐՄԱՐ ՑԱՆԿԱՑԱԾ ՎԱՅՐՈՒՄ

ԱՌԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԻԱՎ-Ի ՆԿԱՏՄԱՄԲ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՐՈՂ ԵՔ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ

+374 378989

+374 478989

(ՆԵՐՔԻՆ 103, 104)

+374 55478980

ԿԱՄ ԱՅՑԵԼԵԼ ՆՍՀԿ ԳՐԱՍԵՆՅԱԿ, ԹՈՒՄԱՆՅԱՆ 10, ԲՆ.7

www.ngngo.net

և կարևորության մասին: Քննարկումների արդյունքում մասնակիցները հասկացան ՄԻԱՎ-ի նկատմամբ անվտանգ սեռական վարքագիծ ձևավորելու, ինչպես նաև պարբերաբար թեստավորվելու կարևորությունը:

Դասընթացը շարունակեց կազմակերպության իրավաբան Շուշան Խնկոյանը, որը ներկայացրեց «Առողջության իրավունք» թեման: Նա խոսեց բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս մարդու իրավունքներից, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման տեսակներից, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների իրավունքներից և պարտականություններից, ինչպես նաև ՄԻԱՎ վարակից առաջացած հիվանդության կանխարգելման մասին ՀՀ օրենքից:

Դասընթացն անցավ ջերմ մթնոլորտում, որտեղ մասնակիցները հնարավորություն ունեցան հղելու հարցեր, կատարելու մեկնաբանություններ և ստանալ սպառիչ պատասխաններ:

իրավապաշտպան ՀԿ նախագահ Կամելիա Ղանդիլյանը: Մասնակիցները ակտիվորեն քննարկեցին ՄԻԱՎ-ի ոլորտում տրամադրվող ծառայությունները, խոսեցին կանխարգելիչ նյութերի քանակից և որակից, ծառայությունների հասանելիությունից, ի հայտ եկած խնդիրներից, դրանք լուծելու տեսլականից և շատ այլ հարցեր: Մասնակիցների կարծիքները, մտահոգությունները և առաջարկությունները լսելուց հետո ՀՀ ԱՆ ներկայացուցիչ Հասմիկ Հարությունյանը մանրամասն ներկայացրեց իրականացվող աշխատանքները և բարեփոխումները, տվեց մտահոգող շատ հարցերի պատասխաններ:

Երկրորդ հատվածում մասնակիցները խոսեցին ՔՈՎԻԴ-19 համավարակի և նրա ազդեցությունների մասին, որոնք սեքս աշխատող և տրանս* համայնքները կրել են: Բարձր գնահատվեց նաև ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների և տրամադրվող աջակցությունների դերը համավարակի ազդեցությունները մեղմելու ուղղությամբ:

Վերջին սեսիան վարեց «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ կարողությունների զարգացման համակարգող, Տրանս* անձանց հայաստանյան աշխատանքային խմբի անդամ, ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի միջոցառումները համակարգող հանձնաժողովի (ՄՀՀ) անդամ Հմայակ Ավետիսյանը, որը խոսեց որոշումների կայացման գործընթացում համայնքների ներգրավվածության կարևորության մասին, քննարկվեցին մի շարք հարցեր, որոնք առաջարկվեց ներկայացնել ՄՀՀ հերթական նիստի ընթացքում: Մասնակիցներից մի քանիսը ցանկություն հայտնեցին ներգրավվել նաև ՄՀՀ հաջորդ նիստում որպես մասնակիցներ:

Սեքս աշխատող և տրանս* անձանց առաջին ազգային համաժողովը անցավ քննարկումների և հարցուպատասխանի չափազանց ակտիվ մթնոլորտում: Մասնակիցներին հնարավորություն տրվեց խոսելու իրենց խնդիրների վերաբերյալ և ինքնուրույն առաջարկելու լուծումներ:

Համաժողովը կազմակերպվել է «Տրանս քարտեզը ԱԵԿԱ-ում» ծրագրի շրջանակներում ստեղծված Տրանս* անձանց հայաստանյան աշխատանքային խմբի անդամ 3 կազակերպությունների՝ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ, «Տրանս ազգային կոալիցիա» իրավապաշտպան ՀԿ, «Ֆիռլես» իրավապաշտպան ՀԿ, ջանքերով և նախաձեռնությամբ: